ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՏԻԿԻՆ ԱՐՓԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻ՝ ԲԱԲԿԵՆ ՍԵԴՕՎԻ ՍԵԴՐԱԿՅԱՆԻՑ

/ք. Երևան, Կենտրոն, Հյուսիսային Պողոտա, 3 շենք, 46 բնակարան/

հեռ. +374-91-919-191 բջջ., էլ. փոստ՝ 7007777@gmail.com

«ՊԱՏՎԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ»

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Պետական գրանցման համար՝ 211.171.991748

# Դ Ի Մ ՈՒ Մ

Հարգելի տիկին Սարգսյան,

Խնդրում եմ ինձ ընդգրկել Հայաստանի Հանրապետության Ներքին գործերի նախարարին կից հասարակական խորհրդի կազմում:

Կից ներկայացնում եմ պահանջվող փաստաթղթերը.

1. Քաղվածք պետական միասնական գրանցամատյանից՝ «ՊԱՏՎԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» հասարակական կազմակերպության պետական գրանցման մասին,

2. Ամփոփ տեղեկանք՝ վերջին երկու տարում ծավալած գործունեության վերաբերյալ,

3. Հիմնավորում՝ Հասարակական խորհրդում ներգրավման վերաբերյալ,

4. Հակիրճ վերլուծություն՝ վերջին երեք տարիների ընթացքում Ոստիկանության, Միգրացիայի և քաղաքացիության, Փրկարար ծառայության ոլորտներում իրականացվող քաղաքականության վերաբերյալ:

«ՊԱՏՎԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ»
հասարակական կազմակերպության հիմնադիր-
նախագահ՝

Կ.Տ.

Բաբկեն Սեդրակյան
«10» դեկտեմբերի, 2024թ.

# ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՆՔ

**«Պատվավոր Հյուպատոսների Միություն»**
**հասարակական կազմակերպության՝**
**վերջին երկու տարում ծավալած գործունեության վերաբերյալ**

«Պատվավոր Հյուպատոսների Միություն» հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 2017 թվականին և գործունեություն է ծավալում ք. Երևան, Ամիրյան փող., 18/3 հասցեում: Կազմակերպությունը ներկայումս ընդգրկում է Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված՝ թվով 32 Պատվավոր Հյուպատոսական Հիմնարկներ ղեկավարող՝ հյուպատոսական պատվավոր պաշտոնատար անձանց: Վերոհիշյալ պաշտոնատար անձինք՝ Պատվավոր Հյուպատոսներն ու նրանց կողմից գլխավորվող Հյուպատոսական Հիմնարկներն, ում լիազորությունները սահմանված են «Հյուպատոսական կապերի մասին» Վիեննայի՝ 1963 թվականի ապրիլի 24-ի Կոնվենցիայով, գրեթե ամենօրյա ռեժիմով հարաբերվում են հավատարմագրող պետության տարածքում, կամ, ինչպես ընդունված է կոչել՝ «հյուպատոսական տարածաշրջանում» բնակվող, կացության ժամանակավոր, մշտական կամ հատուկ կարգավիճակ ունեցող, կամ, առհասարակ՝ որևիցէ կարգավիճակ չունեցող օտարերկրյա քաղաքացիների հետ, և անշուշտ, նրանց իրավունքների և շահերի պաշտպանության հարաբերություններին առնչվող՝ Հայաստանի Հանրապետության իրավասու պետական մարմինների հետ: Մասնավորապես, որպես այդպիսի հարաբերությունների իրավակարգավորման առանցքային դերակատարներից է ՀՀ Ներքին գործերի նախարարությունն՝ ի դեմս Ոստիկանության, Միգրացիայի և քաղաքացիության ծառայության, Փրկարար ծառայության՝ նրանց նկատմամբ համապատասխանաբար հարկադրանքի միջոցներ կիրառելու, կացության կարգավիճակ շնորհելու, արտակարգ իրավիճակներում նրանց պաշտպանության և այլ բազմաթիվ իրավահարաբերությունների համատեքստում: Եվ հենց «Պատվավոր Հյուպատոսների Միությունն» է այն հարթակը, որտող գեներացվում են ծագող խնդիրների շուրջ պարբերաբար ծավալվող քննարկումները, լուծման ուղիներն ու արդյունքների ամփոփումը: Այդպիսի քննարկումներն ու առհասարակ՝ Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական անձնակազմի՝ դեսպանությունների, դիվանագիտական կարգավիճակ ունեցող միջազգային կազմակերպությունների ներկայացուցչությունների, պատվավոր հյուպատոսական հիմնարկների, ոչ ռեզիդենտ դեսպանությունների՝ Հայաստանի Հանրապետությունում անխոչընդոտ և արդյունավետ գործունեության կազմակերպաիրավական ապահովման հարցերը ևս, որ «Պատվավոր

Հյուպատոսների Միություն» հասարակական կազմակերպության մշտական ուշադրության կենտրոնում են, առաջ են բերում այն բարելավելուն ուղղված նոր գաղափարական մոտեցումներ, առկա իրավական դաշտում գոյություն ունեցող բացերը լրացնելու և թերությունները շտկելու նոր առաջարկություններ: Այդպիսի ցայտուն օրինակ է 2024 թվականի ընթացքում ՀՀ Արդարադատության նախարարության կողմից նախաձեռնված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 9-ի թիվ 1251 որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի շուրջ մասնագիտական քննարկումներին «Պատվավոր Հյուպատոսների Միություն» հասարակական կազմակերպության ակտիվ մասնակցությունն ու իրավական ակտի նախագիծը կատարելագործելու շուրջ ներկայացված առաջարկությունների փաթեթը, որոնք գլխավորապես ընդունվեցին հեղինակների, այդ թվում ՀՀ Ներքին գործերի նախարարության ներկայացուցիչների կողմից, որին իրավական ակտի կիրարկման դերաբաշխման մեջ վերապահված էր առանցքային դերակատարում: Հասարակական կազմակերպության ուշադրության առանցքում են նաև մի կողմից՝ ՀՀ Ներքին գործերի նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների ծառայողների, և մյուս կողմից՝ Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական անձնակազմի՝ դեսպանությունների, դիվանագիտական կարգավիճակ ունեցող միջազգային կազմակերպությունների ներկայացուցչությունների, պատվավոր հյուպատոսական հիմնարկների, ոչ ռեզիդենտ դեսպանությունների ներկայացուցիչների փոխհարաբերությունները, վերջիններիս նկատմամբ՝ երբեմն ոչ իրավաչափ, հաճախ իրազեկվածության ոչ բավարար պաշարի պատճառով՝ միջազգային իրավական ակտերի անտեսմամբ իրականացվող վարչարարությունը, որի շուրջ կազմակերպությունում ծավալվող քննարկումները նույնպես հանգում են իրավաչափ և ներդաշնակ փոխհարաբերություններ սահմանելու յուրօրինակ լուծումների, իսկ այդ լուծումների կյանքի կոչման լավագույն հարթակ կարող է հանդիսանալ հենց Ներքին գործերի նախարարին կից հասարակական խորհուրդը:

Շնորհակալություն ուշադրության համար:

## Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

**Հասարակական խորհրդում ներգրավման վերաբերյալ**

«Պատվավոր Հյուպատոսների Միություն» հասարակական կազմակերպությունը հիմնադրել և նախագահում է Բաբկեն Սեդրակյանը, ով ՀՀ Ոստիկանության գնդապետ է, Ոստիկանության մարմիններում զբաղեցրել է տարբեր բարձրաստիճան ղեկավար պաշտոններ և այդ մարմիններում ունի շուրջ 17 տարվա աշխատանքային փորձ /այդ թվում՝ օպերատիվ աշխատանքի/: Իր աշխատանքային գործունեության ընթացքում բազմիցս արժանացել է Ոստիկանության բարձր պարգևների: Ամբողջական պատկերացում ունի Ոստիկանությունում ծառայության առանձնահատկությունների, խնդիրների, ծառայության որակը բարելավելու, Ոստիկանություն-հասարակություն հարաբերություններն ամրապնդելու հիմնահարցերի շուրջ: 2018-2019թթ. հանդիսացել է ՀՀ Ոստիկանության պետին կից հասարակական խորհրդի անդամ և իր հասարակական գործունեության ընթացքում հանդես եկել Ոստիկանությունում ծառայության կատարելագործմանն ուղղված բազմաթիվ առարկայական առաջարկություններով: Մշտապես եղել է Ոստիկանության համակարգի՝ միջազգային լավագույն փորձին և արդի պահանջներին համապատասխանող բարեփոխումների կողմնակիցն ու ջատագովը: Բացի այդ, Բաբկեն Սեդրակյանն առայսօր հանդիսանում է «Միջազգային ոստիկանական ասոցիացիա» միջազգային հասարակական կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության ղեկավարի տեղակալը և սերտ կապեր ունի Ասոցիացիայի անդամ երկրների ոստիկանական կառույցների ներկայացուցիչների հետ, ինչը թույլ է տվել մշտապես հետևել առաջադեմ աշխարհի ոստիկանական կառույցներում իրականացվող բարեփոխումների ընթացքին, կատարել հետևություններ ու եզրահանգումներ, և Ոստիկանության մարմիններում իր բազմամյա ծառայության փորձի համադրությամբ հանդես գալ առաջարկություններով: ՀՀ ոստիկանության պետին կից հասարակական խորհրդի կազմում իր գործունեության ընթացքում մշտապես աջակցել և սատարել է ՀՀ Ոստիկանության վետերանների միության գործունեությանը և կարևորել այդ կառույցի աշխատանքը: Բաբկեն Սեդրակյանը կողմնակիցն է Ոստիկանության ծառայողների և վետերանների սոցիալական պաշտպանվածության լրացուցիչ երաշխիքներ սահմանելու միջոցով բարելավելու ծառայության որակը: Ամբողջությամբ կիսում է Ոստիկանության բարեփոխումների՝ ս/թ. նոյեմբերին ՀՀ կառավարության կողմից ընդունած ռազմավարության գաղափարախոսությունն ու 2024-2026թթ. գործողությունների ծրագրային դրույթները, երկրում իրավապահ համակարգի համակարգային արդիականացման անհրաժեշտության փիլիսոփայությունը: Իբրև նպատակադրում ընդունում է Ներքին գործերի նախարարության կայացումը, ՆԳՆ և Ոստիկանության միջև ինստիտուցիոնալ կապի ամրապնդման և մատուցվող ծառայությունների որակի բարելավման անհրաժեշտությունը, Ոստիկանության կառավարման համակարգի գործիքակազմի ձևավորման ամփոփումն ու մարդկային ռեսուրսների կառավարման նոր մոտեցումների ներդրման անհրաժեշտությունը: Կարևոր է համարում Ոստիկանությունում ծառայության գրավչության բարձրացմանն ուղղված նոր մեխանիզմների ամրագրումը, ծառայությանը կանանց վերգրավվածության մեծացումը,

աշխատակիցների բարեվարքության ամրապնդումն ու կոռուպցիոն ռիսկերի կառավարման, ներքին անվտանգության մեխանիզմների ամրապնդումը, միասնական կրթական համակարգի ձևավորումը:

Այսպիսով, Բաբկեն Սեդրակյանի՝ ՀՀ ոստիկանության մարմիններում ծառայության բազմամյա փորձը, իրազեկվածության աստիճանը, գիտելիքներն ու պատկերացումները, ինչպես նաև բազմաշերտ հասարակական գործունեությունը կարող են մեծապես օգտակար լինել ՀՀ Ներքին գործերի նախարարին կից հասարակական խորհրդի աշխատանքներին:

Շնորհակալություն ուշադրության համար:

## ՀԱԿԻՐՃ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

վերջին երեք տարիների ընթացքում Ոստիկանության, Միգրացիայի և քաղաքացիության, Փրկարար ծառայության ոլորտներում իրականացվող քաղաքականության վերաբերյալ

Հասարակական անվտանգությունը երաշխավորող ու ապահովող առաջնային լիազորված պետական մարմինը Ոստիկանությունն է, որի խնդիրներն ամփոփվում են հանրային աջակցությամբ, օրենքների պահպանմամբ, հանցագործությունների կանխարգելմամբ, հայտնաբերմամբ և քննությամբ, ինչպես նաև հասարակական կարգի պաշտպանությամբ՝ հասարակության անդամների և նրանց սեփականության պաշտպանության առաջնային նպատակի մեջ: Իրապես, Ոստիկանությունը պետության կողմից անվտանգության ապահովման առաջնագծում է, և քաղաքացիներն՝ իրենց ամենօրյա կյանքում, ամենահաճախն են առնչվում Ոստիկանության գործունեությանը: Հատկանշական է, որ օրենսդրությամբ սահմանված դեպքերում Ոստիկանությունն ունի մարդու հիմնական իրավունքների կիրառումը սահմանափակելու, նրանց ազատությունից զրկելու և հարկադրանքի միջոցներ ու ուժ կիրառելու լիազորություն: Հետևաբար, նմանօրինակ իր իշխանության, ինչպես նաև հասարակությանը մոտ կանգնած լինելու պատճառով, ոստիկանական գործառույթների իրականացման մեթոդներն ու եղանակն ուղիղ ազդեցություն ունեն հասարակության անդամների, համայնքների և պետության անվտանգության վրա՝ առհասարակ:

Իսկ ինչ նպատակներ պետք է հետապնդի Ոստիկանության ոլորտում իրականացվող բարեփոխումային քաղաքականությունը և ինչու է անհրաժեշտ Ոստիկանության բարեփոխումը. սրանք այն հարցադրումներն են, որոնք ուրվագծում են համակարգի փոփոխությունների մոդելը՝ անվտանգության ոլորտի բարեփոխումների համատեքստում: Այդպիսի փոփոխություններն ամենից առաջ պետք է նպատակադրում ունենան վերափոխելու Ոստիկանության մարմինների քաղաքականությունն ու գործելաոճը, մշակույթն ու արժեքները՝ իրենց գործառույթներն իրականացնելու ժողովրդավարական արժեքները, մարդու իրավունքները հարգելու և օրենքի գերակայության միջոցով:

Վերոհիշյալի համատեքստում վերլուծությունները հանգում են այն դիտակետին, որ ժողովրդավարական ոստիկանության պրոֆեսիոնալ գործելաոճն ամենից առաջ պետք է կառուցված լինի անվտանգության նկատմամբ մարդակենտրոն մոտեցումների, ազգային օրենքներին և միջազգային իրավական ակտերին համապատասխան՝ մարդու իրավունքների պաշտպանության, որևէ առանձնահատկությամբ կամ հատկանիշով չպայմանավորված՝ հասարակության բացառապես բոլոր անդամների, հատկապես՝ անհապաղ աջակցության կարիք ունեցողների անվտանգային կարիքներին արձագանքելու գերակա սկզբունքների հիման վրա: Ավելին, անհրաժեշտ է, որ բարեփոխումային քաղաքականությունը երաշխավորի ոստիկանության համակարգի գործունեության բարձր

հաշվետվողականության մակարդակ և ժողովրդավարական ու հանրային վերահսկողության արդյունավետ կառուցակարգերի կիրառում: Բացառապես նման պայմաններում է հնարավոր ոստիկանության համակարգում ունենալ արդյունավետ և գործուն հանրային ծառայություն:

Ուսումնասիրություններն ի ցույց են դնում նաև Ոստիկանության համակարգի ռազմավարական բարեփոխումների ծրագրային ողջունելի այնպիսի դրույթներ, որոնք ուղղված են բարելավելու Ոստիկանության փոխհարաբերություններն անվտանգության ոլորտի այլ դերակատարների՝ դատարանների, քրեակատարողական հաստատությունների, գործադիր, օրենսդիր կամ անկախ մարմինների հետ, որոնք օժտված են կառավարման կամ վերահսկողության լիազորություններով:

Անդրադառնալով այն հարցադրմանը, թե ինչու է անհրաժեշտ Ոստիկանության համակարգի բարեփոխումը, պետք է նկատել, որ քաղաքական, իրավական և սոցիալական համատեքստը, որում գործում է Ոստիկանությունը, հաճախ ենթարկվում է փոփոխությունների, հետևաբար, այդպիսի պայմաններում անհրաժեշտություն է ծագում Ոստիկանության՝ որպես հանրային անվտանգության ինստիտուտի այնպիսի ձևափոխումը, որ այն բավարարի համայնքների ակնկալիքներին և անվտանգության փոփոխվող կարիքներին, որոնց այն ծառայում է: Տեսականորեն ընդունված է գնահատել, որ անվտանգության ոլորտի բարեփոխումների համատեքստում Ոստիկանության բարեփոխումները կարող են անհրաժեշտ դառնալ տարբեր պատճառներով՝ տեղական, ազգային կամ միջազգային համատեքստերով պայմանավորված, կամ դրանց համադրությամբ: Սակայն ինչպիսի համատեքստով էլ որ պայմանավորված իրականացվեն այդ բարելավումները, դրանք պետք է միտված լինեն հասարակության բոլոր անդամների համար հավասար վերաբերմունքի և հնարավորությունների հասնելուն, արդարադատության առումով՝ ունենալու իրավունքները և օրենքի գերակայությունը հարգող ու պաշտպանող ոստիկանություն, բարելավելու ոստիկանության մասին հանրային ընկալումը՝ ոստիկանության ֆինանսավորման, ծախսերի, գործունեության և լեգիտիմ դերի ու պատասխանատվության մասին հավասարակշռված տեղեկությունների տրամադրմամբ, կոռուպցիայի վերացմանն ու բարեվարքության խթանմանը՝ ուսումնական ծրագրերի, բողոքների գործուն մեխանիզմների միջոցով և ոչ կոմպետենտ կամ կոռումպացված պաշտոնյաների հեռացմամբ, իրավական կարգավորումների, կանոնադրությունների, ուսումնական և գործառնական ընթացակարգերի արդիականացմանն ու թարմացմանը, իրավապահ մարմինների և տեղական ու ազգային մակարդակների տարբեր մարմինների միջև բազմակողմանի համագործակցության հաստատմանը, Ոստիկանությունում ծառայության կազմակերպման արդյունավետությանը՝ բարելավելով Ոստիկանության կողմից իր օրինական պարտականությունների իրականացումը, հանրային ռեսուրսների պատշաճ օգտագործմանը:

Շնորհակալություն ուշադրության համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ առ 2017-11-07

# «ՊԱՏՎԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ»
## Հասարակական կազմակերպություն (ՀԿ)

| | |
|---|---|
| Գրանցման համար | 211.171.991748 |
| Հիմնադրման տարի | 2017 |
| Գրանցման ամսաթիվ | 2017-11-07 |
| Գործունեության ժամկետ | Անժամկետ |
| Կարգավիճակ | Իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն: |
| Իրավաբանական անձի ծածկագիր (ՁԿԴ) | 50791709 |
| Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ) | 02669692 |
| Սոցիալական վճարների պարտավորությունների անձնական հաշվի քարտի համար (Ապահովադրի ծածկագիր) | 175748 |
| Էլ. փոստ | aikiazm@gmail.com |
| Կայք | - |

**Գտնվելու վայրը**

| | |
|---|---|
| Հասցե | ԱՄԻՐՅԱՆ ՓՈՂ. / Շ / 18/3 / ԲՆ. 2 ԿԵՆՏՐՈՆ 0002 ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ |
| Հեռախոս | (10)000000 |

**Գործադիր մարմնի ղեկավար**

| | |
|---|---|
| Պաշտոն | Նախագահ |
| Անուն Ազգանուն | ԲԱԲԿԵՆ ՍԵԴՐԱԿՅԱՆ ՍԵԴՈՎԻ |
| Անձնագրային տվյալներ | 005952817 2017-09-28 007 |
| Հասցե | ԱՄԻՐՅԱՆ ՓՈՂ. / Շ / 18/3 / ԲՆ. 2 ԿԵՆՏՐՈՆ 0002 ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ |

Էջ 2

[illegible]

**Տեղեկություններ իրավահաջորդության / իրավանախորդության վերաբերյալ**

Իրավանախորդ(ներ) **գրառված չեն**

**Պետական միասնական գրանցամատյանում կատարված փոփոխություններ**

**Պետական միասնական գրանցամատյանում փոփոխություններ կատարված չեն**

| Գրանցման ամսաթիվ | Փոփոխություններ |
| --- | --- |

Քաղվածքը տրամադրող՝ ____________ **Նարինե Զալյան**

ստորագրություն

Քաղվածքի տրամադրման ամսաթիվ՝ **07-11-2017**